



**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1, հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլ. հասցե՝ www.y-su.am, board@ysu.am

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Երևանի պետական համալսարան»

հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝

2023 թ. հունվարի 30-ին տեղի ունեցած հարցման կարգով թիվ 1 նիստի

ՀՀ, ք. Երևան

30.01.2023 թ.

2023 թվականի հունվարի 30-ին հարցման կարգով տեղի ունեցավ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հարցման կարգով նիստը:

Հարցման կարգով նիստին և քվեարկությանը մասնակցել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ ՀՀ վարչապետի կողմից 2021 թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1222-Ա որոշմամբ հաստատված հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 20 անդամներից՝ 14-ը (կից ներկայացվում են Խորհրդի 14 անդամների քվեարկության արդյունքները):

Ներկայացված օրակարգը՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատում:

Հոգաբարձուների խորհրդի անդամներին ուղարկվել էր 2022 թվականի դեկտեմբերի 28-ի նիստի ընթացքում Խորհրդի անդամների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա փոփոխված կանոնադրությունը: Ուստի առաջարկվել էր հաստատել նոր խմբագրությամբ կանոնադրությունը:

Առցանց եղանակով անցկացված, օրակարգի 1-ին հարցի քվեարկության արդյունքները՝ **կողմ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 15-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 15-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի նոր խմբագրությամբ կանոնադրությունը:

Խորհրդի նախագահ՝

Ս. Պապիկյան

Խորհրդի քարտուղար՝

Ե. Կիրակոսյան